Ա.ՄԻՀԱԿՈՐՅԱՆ, Կարսի մարզ (Գյուղացիության պատմության ուրվագծեր), 1878 - 1917թթ., ՀՊՃՀ «Ճարտարագետ» հրատարակչություն, Ե., 2000, 166 էջ:

Արևելյան Հայաստանի գյուղացիության պատմության և ընդհանրապես ագրարային-գյուղացիական հարցի գիտական մշակման ուղղությամբ անվիճելի մեծ վաստակ ունեն Վ.Ռշտունին, Ա.Համբարյանը, Ի.Ավդալբեկյանը, Մ.Ադոնցը, Հ.Թումանյանը, Ս.Ալեքսանյանը և ուրիշներ: Թվում է, թե նման ճանաչված հեղինակների ուսումնասիրություններից հետո այլևս անելիք չկա: Սակայն նրանք, ովքեր քիչ թե շատ ծանոթ են Հայաստանի նոր շրջանի պատմության բազմաբնույթ հիմնահարցերին, գիտեն, թե դեռևս որքան անելիքներ կան այդ ուղղությամբ:

Գրախոսվող մենագրության հեղինակն իր առջև խնդիր է դրել Կարսի մարզի գյուղացիության պատմության օրինակով ուսումնասիրել Արևելյան Հայաստանի պետական գյուղացիների պատմությունը: Բանն այն է, որ խորհրդահայ պատմաբանները և տնտեսագետները ուսումնասիրել են գերազանցապես Արևելյան Հայաստանի մասնատիրական (կալվածատիրական) գյուղացիության պատմության հարցերը, մինչդեռ պետական գյուղացիության խնդրին հատուկ չեն անդրադարձել այն դեպքում, երբ գյուղացիների այդ կարգախումբը կազմել է արևելահայ գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը ավելի քան 72 %-ը:

Մեր կարծիքով, Ա.Հակոբյանը Կարսի մարզն իր ուսումնասիրության օբյեկտ է դարձրել երկու նպատակով. առաջին՝ 1877 - 1878թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Ռուսաստանի տիրապետության տակ անցած Կարսի սանջակի գյուղացիներն իրենց կարգավիճակով եղել են գերազանցապես պետական և երկրորդ՝ Կարսի մարզը, սոցիալ-տնտեսական ու ագրարային հարաբերությունների յուրահատկությունների ուսումնասիրության տեսակետից, մի տեսակ կապող օղակ է հանդիսացել Արևմտյան և Արևելյան Հայաստանների միջև:

Մենագրությունն ունի ներածություն և չորս գլուխ: Աշխատությունը շարադրված է հարուստ աղբյուրագիտական հիմքի վրա, որը բարձրացնում է նրա գիտական արժեքը: Աղբյուրների մի զգալի մասն առաջին անգամ է դրվել գիտական շրջանառության մեջ:

Աշխատության մյուս արժանիքներից մեկն էլ այն է, որ հեղինակը լայնորեն օգտագործել է վիճակագրական հարուստ նյութեր, հողային հարաբերությունների և գյուղացիության սոցիալ-տնտեսական կյանքի շարժը բնութագրող մի շարք աղյուսակներ: Ա.Հակոբյանը հանգամանորեն ուսումնասիրել է 1886թ. Կովկասյան վիճակագրական կոմիտեի ծխային ցուցակագրության, 1897թ. մեկօրյա ընդհանուր մարդահամարի և 1917թ. գյուղատնտեսական հաշվառման՝ Կարսի մարզին վերաբերող նյութերը: Մասնավորապես ուսումնասիրվել են 1917թ. գյուղատնտեսական հաշվառման՝ Կարսի մարզին վերաբերող 77 գյուղերի ազգարնակչության հարցաթերթիկների (անկետային) տվյալները և դրանց հիման վրա որոշվել գյուղացիության սոցիալական շերտավորման աստիճանը: Կատարված հաշվումներով մարզի գյուղացիական տնտեսությունների 42,7 %-ը կազմել են չքավորները (էջ 108):

Աշխատության առաջին գլուխը վերաբերում է Կարսի մարզի կազմավորման գործընթացին և ժողովրդագրական կազմին: Հեղինակը ցույց է տվել, թե ինչպես ռուս-թուրքական պատերազմների մշտական թատերաբեմ Կարսի տարածքի հայաթափ եղած այդ շրջաններում Ռուսաստանին միացումից հետո հայ

ազգաբնակչության տեսակարար կշիռն անշեղորեն աճեց և արդեն 1914թ. կազմում էր մարզի ընդհանուր ազգաբնակչության 30 %-ը (էջ 27): Հարկ է նշել, որ հեղինակը մի կողմից բացահայտում է հայ ժողովրդի համար Կարսի մարզի՝ Ռուսաստանին միացման առաջադիմական նշանակությունը, իսկ մյուս կողմից՝ չի շրջանցում ցարիզմի հետապնդած մեծապետական հողային ու գաղութային քաղաքականությունն այդ երկրամասում:

Երկրորդ գլխում Ա.Հակոբյանը հանգամանորեն քննության է առել հողային հարաբերությունները, հողատիրության ձևերը, հողակարգավորման գործընթացը և ընդհանրապես տարածաշրջանում ցարական կառավարության վարած ագրարային քաղաքականությունը: Միաժամանակ, աշխատության այս հատվածի ընթերցումից կարելի է բավականաչափ պատկերացում ունենալ Թուրքիայի այն ժամանակվա հողային հարաբերությունների և 1858թ. թուրքական հողային օրենքի՝ Կարսի սանջակում գործադրման ընթացքի վերաբերյալ (էջ 35 - 47, 58 - 66):

Ուշագրավ է, որ ցարիզմի ագրարային քաղաքականությունը Կարսի մարզում տրված է ոչ թե մեկուսի, այլ՝ անդրկովկասյան նահանգների ու, առաջին հերթին, Երևանի նահանգի հետ աղերսված: Ընդ որում, հեղինակին հաջողվել է ի հայտ բերել Կարսի մարզի և Երևանի նահանգի գյուղացիության կյանքի ու պայքարի ընդհանրությունները և առանձնահատկությունները:

Արխիվային վավերագրերի և այլ սկզբնաղբյուրների ուսումնասիրության հիման վրա աշխատության հեղինակը եզրակացրել է, որ ցարական կառավարության ծայրերկրային ագրարային քաղաքականության նպատակը եղել է հողի պետական սեփականատիրական իրավունքի ամրապնդումը և գրանցում ապրող պետական չինականներից (գյուղացիներից) առավելագույն չափով հարկերի ու տուրքերի գանձումը (էջ 66 - 81, 108 - 122): Այդ քաղաքականության արտահայտությունն էր այն, որ մարզի գրեթե ամբողջ հողային տարածքը (1,7 մլն դեսյատին) համարվեց պետական (արքունի) սեփականություն (էջ 51):

Աշխատության հետագա գլուխներում հեղինակն անդրադարձել է գյուղացիության և գյուղաշխարհի սոցիալ-տնտեսական, իրավական և կրթամշակութային կյանքի բազում խնդիրներին: Ա.Հակոբյանը Կարսի մարզի ավելի քան 800 մեծ ու փոքր գյուղերի օրինակով ուսումնասիրել է գյուղական համայնքն ըստ կառավարման կարգի, էթնիկական ու սոցիալական կազմի, տնտեսավարման ձևի, հարկագանձման ու հողաբերաբաժանության համակարգի և այլ հատկանիշների: Ցույց է տվել, թե ինչպես ապրանքաշուկայական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղական (հողային) համայնքի ներսում համայնականները ավանդական չնչական-պարբերական վերաբաժանումներից անցում են կատարում ծխական-ժառանգական հողատիրման (էջ 92 - 101): Գյուղացիության հողապահովվածության և տնտեսական այլ ցուցանիշների տեսակետից հեղինակը համեմատություններ է անցկացրել Կարսի, Երևանի և կովկասյան մյուս նահանգների գյուղացիական համանման կարգախմբերի միջև և պարզել, որ Նորանվաճ մարզում գյուղացիությունը գտնվել է համեմատաբար ավելի տանելի վիճակում:

Աշխատության մեջ տրվում է գյուղում և գյուղատնտեսության մեջ ապրանքաշուկայական հարաբերությունների զարգացման խնդրի լուսաբանումը,

հարաբերություններ, որոնք հեղինակի ճիշտ դիտարկմամբ, պայմանավորված էին մի կողմից ռուսական կապիտալի՝ դեպի տարածաշրջան ներթափանցմամբ, իսկ մյուս կողմից՝ հաղորդակցության ուղիների բարելավմամբ ու հատկապես XIX դարավերջից երկաթուղու կառուցմամբ:

Մենագրության մեջ հետաքրքիր տվյալներ են բերված, թե ինչպես ռուսական տիրապետության մի քանի տասնամյակների ընթացքում մարզի գյուղատնտեսության երկու հիմնական ճյուղերը՝ հացահատիկային կուլտուրաների մշակությունը և անասնապահությունը, նկատելի վերելք ունեցան (էջ 132 - 148), որոնք սակայն, ցավոք, առաջին աշխարհամարտի տարիներին անկում ապրեցին, իսկ փոքր ավելի ուշ պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձություններն այնպես աննպաստ դասավորվեցին, որ Հայոց այդ տարածքը բռնակցվեց Թուրքիային և դրանով իսկ դուրս բերվեց իր բնականոն զարգացման հունից:

Այսուհանդերձ, մենագրությունը զերծ չէ մասնակի թերություններից: Նկատվում են օտարալեզու արտահայտություններ, որոշ կրկնություններ: Ցանկալի կլիներ, որ գիրքն օժտված լիներ հայերեն և ռուսերեն վերջաբանով:

Գրախոսվող աշխատությունն ունի անվիճելի պատմագիտական արժեք: Այն նկատելի քայլ է Հայաստանի գյուղացիության գիտական պատմության ամբողջացման ճանապարհին:

Վ.Խ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու